

հաջողությամբ գործում է «Տեղական տուրքերի ու վճարների մասին ՀՀ օրենքի պարագայում): Նշված հիմնախնդրի լուծումը պահանջում է փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 34-րդ հոդվածներում, ինչպես նաև «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» օրենքներում: Փոփոխություններ անհրաժեշտ է կատարել նաև գույքահարկի հարկման օբյեկտների ցանկի ընդլայնման առումով՝ դրանում ներառելով հոսքագծերը, հաստոցները, մեքենա-մեխանիզմները և այլն, որոնք գույքահարկով հարկվել են ոչ վաղ անցյալում, ինչպես նաև հողի հաշվարկման մեխանիզմներում, որոնք սահմանվել են դեռևս 1994 թվականին ընդունված «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով:

2. Եկամտային հարկերից համայնքային բյուջեներին տարբերակված տոկոսներով մասհանումների մեխանիզմի կիրառումը, որը կնպաստի համայնքի վարչական տարածքի ֆիսկալային հնարավորությունների մեծացմանը՝ հրաժարվելով դոտացիաների հատկացման գործող մոտեցումներով դոտացիաների տրամադրման պրակտիկայից և մինչև նոր մոտեցումների ամրագրումը հիմնախնդիրը լուծել եկամտային հարկերից մասհանումների մեխանիզմի կիրառմամբ: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում նաև համայնքային բյուջեներին ամրակցված պետական տուրքերը դարձնել պետական բյուջեի եկամտային աղբյուր:

3. «Տեղական տուրքերի ու վճարների մասին» ՀՀ օրենքի էական փոփոխությունը տեղական տուրքերի անվանացանկի ընդլայնման ու դրանց չափերի մեծացման առումով, մասնավորապես, որ տեղական բյուջեների եկամուտների ձևավորման հիմք հանդիսացող հարկերի ու տուրքերի տեսակների թիվը Ֆրանսիայում գերազանցում է 50-ը, Բելգիայում այն մոտ 100 է, իսկ ՀՀ-ում չի գերազանցում 25-ը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՄԻՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային իշխանության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը տնտեսական բարեփոխումների ուղին բռնած ԱՊՀ-ի անդամ մյուս երկրների նման կանգնեց տնտեսության մեջ օբյեկտիվորեն առաջացած բարդ խնդիրների առջև: Տասնամյակների ընթացքում տարբեր ձեռնարկությունների միջև ձևավորված ինտեգրացիոն կապերի խզումը, սպառման լծակների կորուստը, երկրի տնտեսական շրջափակումն ու պատերազմական իրավիճակը, ինչպես նաև զենքի ազատականացումն ու բյուջեի ֆինանսավորման, այդ թվում՝ կապիտալ ներդրումների խիստ կրճատումը տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծեցին խիստ անբարենպաստ պայմաններ: Տրանսպորտային և էներգետիկ ծախսերի կտրուկ աճի հետևանքով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ճյուղերը հայտնվեցին խորը ճգնաժամի մեջ: Բնական է, որ տվյալ պայմանները չէին կարող նպաստել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի զարգացմանը:

1996թ. հիմնարար բանկային օրենքներ ընդունելուց հետո վստահելի շրջանակ ստեղծվեց առևտրային բանկերի գործունեության համար: Ըստ այդ օրենքի՝ բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը, ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և ներդրումներ կատարելու միջոցով: Առանց Կենտրոնական բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը (ՀԿԲ) ընդունել է նաև լրացուցիչ դրույթներ՝ հնարավոր դարձնելու օրենսդրական փոփոխությունների իրականացումը և նոր օրենքներով երաշխավորելու գոյություն ունեցող ստանդարտների կատարումը:

Բանկային համակարգը ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 95%-ը:

1998 թվականին ՀՀ տարածքում գործել են 30 առևտրային և մասնագիտացված բանկեր՝ իրենց 174 մասնաճյուղերով ու բաժանմունքներով՝ 1997 թվականի 33 բանկերի դիմաց: Ընդ որում, ՀՀ բանկերից 17-ը փակ բաժնետիրական ընկերություններ էին, 5-ը՝ բաց բաժնետիրական ընկերություններ, 7-ը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և 1-ը՝ կոոպերատիվ բանկ: Բացի այդ, ՀՀ տարածքում գործում են նաև օտարերկրյա բանկերի 3 դուստր բանկեր: 2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 բանկեր՝ 233 մասնաճյուղերով: 2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր (267 մասնաճյուղերով): 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը բաղկացած է եղել 21 առևտրային բանկերից (299 մասնաճյուղերով):

Եթե նախկինում բանկերը կարող էին ունենալ արտարժույթով պարտադիր ռեզերվներ, ապա 1999թ. ապրիլից վերջիններս առևտրային բանկերի համար կարող են պահվել միայն տեղական արժույթով, իսկ բաց օտարերկրյա արժույթի դիրքերի սահմանափակումները նվազեցին մինչև կապիտալի 30%՝ 2000թ. հունվարից 25%՝ հետագա կրճատմամբ: Գոյություն ունեցող առևտրային բանկերի համար կապիտալի նվազագույն պահանջները 2000թ. հունվարից աճեցին մինչև 1 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2003թ. աստիճանաբար՝ 3 մլն. ԱՄՆ

դրվար: 2005 թվականի ընթացքում բանկային համակարգի հաշվեկշռային ընդհանուր կապիտալն ավելացել է 46.6%-ով (30.1 մլրդ դրամով) և կազմել 94.8 մլրդ դրամ:

2006 թ-ի տասնմեկ ամիսների ընթացքում բանկային համակարգն ապահովել է 15.0 մլրդ դրամի շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի շահույթի մեծությունը գերազանցելով 29.6%-ով: Բացի այդ, նույն ժամանակահատվածում բանկերի դրամային ակտիվներն ու պարտավորությունները 2005թ-ի համեմատությամբ աճել են համապատասխանաբար 34%-ով և 41%-ով, իսկ արտարժույթային ակտիվներն ու պարտավորությունները՝ համապատասխանաբար 3%-ով և 4%-ով: Արդյունքում՝ բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռը ավելացել է 7 տոկոսային կետով և 30.11.2006թ. դրությամբ կազմել ընդհանուրի 54%-ը: Դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը ավելացել է 8 տոկոսային կետով և կազմել ընդհանուր պարտավորությունների 41%-ը:

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը 2006թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 120.3 մլրդ դրամ, ընդհանուր ակտիվները՝ 524.6 մլրդ դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 404.3 մլրդ դրամ:

2007թ. կանխատեսվում է բանկային համակարգի ընդհանուր կապիտալի մոտ 25%-ով աճ (31 մլրդ դրամով):

2007թ. բանկային համակարգի շահույթի մեծությունը կկազմի մոտ 20 մլրդ դրամ: Ընդ որում, շահույթի աճը հիմնականում կայանաավորվի վարկային ներդրումներից տոկոսային եկամտի աճով:

2007թ. ակնկալվում է բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների 10%-ով աճ (38 մլրդ դրամով):

Բանկային համակարգի ակտիվների աճի կանխատեսումը պարտավորությունների և կապիտալի ակնկալվող աճի արդյունք է: Կանխատեսվում է, որ ակտիվների ավելացված միջոցների մոտ 70%-ը կտեղաբաշխվի վարկային ներդրումներում և 10%-ը կներդրվի պետական արժեթղթերում: Արդյունքում՝ 2007թ. վարկային ներդրումների աճը կկազմի 20% (49 մլրդ դրամ), իսկ պետական պարտատոմսերում ներդրումների աճը՝ 8% (7 մլրդ դրամ):

Բանկային համակարգի հետագա զարգացման համար էական կլինի աճող մրցունակ միջավայրում ուժեղ հսկողությունը: ՀՀԲ պետք է հաստատի մոտ բանկային դրույթներ և հայեցակարգեր՝ կատարելագործելով կապիտալի համապատասխանության պահանջը կապիտալի հստակ ճշգրտման միջոցով, ինչպես նաև վարկային դասակարգման և վարկային կորստի ռեզերվների մեթոդաբանության կատարելագործման և հեշտացման միջոցով, դասակարգման և գնահատման չափանիշներ բանկերի ներդրումային պորտֆելի ընդհանուր որակը որոշելու համար:

Այսօրվա դրությամբ մեր հանրապետությունում գործող առևտրային բանկերի ճնշող մեծամասնությունը պատկանում է փոքր կամ միջին կատեգորիաների բանկերի թվին: Իսկ խոշոր առևտրային բանկերը հիմնականում ստեղծվել են նախկին պետական մասնագիտացված բանկերի հիման վրա, ինչպես Արդշինբանկը, Հայագրոբանկը, Հայէկոնոմբանկը, Հայներարտբանկը: Համեմատաբար մոտ ստեղծված առևտրային բանկերն ունեն հիմնականում առանց մասնաճյուղերի (կամ ընդամենը 1-3 մասնաճյուղեր) և ֆունկցիոնալ ստորա-բաժանումների սահմանափակ քանակությամբ կառուցվածք: Միջին և փոքր առևտրային բանկերը սպասարկում են հիմնականում առևտրային բնույթի, մոտ գրանցված տնտեսական կազմակերպություններին:

Թեև ՀՀ առևտրային բանկերն ունիվերսալ տիպի բանկեր են և նրանց վարկային ռեսուրսների շուկայում գործնականապես թույլատրված է իրականացնել բանկային գործառնությունների գրեթե բոլոր տեսակները, այնուամենայնիվ, նրանց բացարձակ մեծամասնությամբ բնորոշ է մեղ մասնագիտացումը: ՀՀ բանկերի եկամուտների հիմնական հոդվածները հանդիսանում են հաճախորդների դրամարկղային-հաշվարկային սպասարկման հետևանքով ստացված միջոցադրամները, կարճաժամկետ վարկերից ստացվող տոկոսները և գործառնական գրասենյակների գործունեության արդյունքում՝ արտարժույթային գործառնություններից ստացվող տոկոսները:

ՀՀ առևտրային բանկերը շարունակում են մրցակցել մոտ ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման ոլորտում, ընդ որում մրցակցությունն առավելապես ընդունել է մեղ մասնագիտացված բնույթ:

2006թ. որպես ուշագրավ մոտ ծառայություններ, արտադրատեսակներ և տեխնոլոգիաներ՝ բանկերի կողմից առաջարկվել են՝

- մոտ տիպի ավանդային ծառայություններ (որոնք առաջարկվել են հաճախորդների տարբեր խմբերի, տարբեր նպատակների և առիթների համար),
- քարտերի մոտ տարատեսակներ, որոնք լրացուցիչ ծառայություններ են առաջարկում քարտապաններին,
- տարբեր նպատակներով առաջարկվող վարկային մոտ ծրագրեր (այդ թվում՝ անշարժ գույքի և ավտոմեքենայի գրավով ապահովված, անշարժ գույքի վերանորոգման վարկեր),
- պոս-տերմինալներով չիսային քարտերի սպասարկում,
- դրամական փոխանցումների համակարգերի ներդրում (այդ թվում՝ «VIP MONEY TRANSFER», «INTEREXPRESS», «BLIZKO», «Быстрая почта»),
- BankMail, («Բանկ-հաճախորդ» համակարգերի ներդրում:

ՀՀ բանկերը առաջարկում են հետևյալ ծառայությունները՝

1. հաշվարկային գործառնություններ՝ բոլոր տիպի հաշվարկային գործառնությունների իրականացում ՀՀ դրամով, ազատ փոխարկելի արտարժույթով և սահմանափակ փոխարկելի արտարժույթով (ՌԴ ռուբլով և այլն), բանկի հաշվետեր հաճախորդների հաշիվներից կոմունալ վարձավճարների ավտոմատ գանձումներ, առուվաճառքի գործարքի վճարման ապահովման (ակրեդիտիվ) ծառայություն, հաճախորդների անհատական սպասարկում /Private Banking/,

2. փոխանցումներ՝ թղթակցային հաղորդակցությունների լայն ցանց, ակնբարձային փոխանցումներ՝ WESTERN UNION, CONTACT, MIGOM, UTS, INTEREXPRESS, VMT, MONEYGRAM,
3. պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, միջազգային վճարային համակարգի քարտերի տրամադրում, սպասարկման կետեր (բանկոմատներ և POS -տերմինալներ),
4. ավանդների ընդունում,
5. ահատվություն,
6. արկերի տրամադրում՝ սպառողական վարկերի տրամադրում, տնտեսվարող սուբյեկտներին վարկերի տրամադրում, ապրանքների ապահով ձեռք բերման նպատակով ֆինանսավորում, մեկ անգամյա սպառողական վարկային քարտերի տրամադրում, վերականգնվող վարկային քարտերով վարկավորում, հիպոթեքային վարկերի տրամադրում:

Բանկերը առաջարկում են նաև հետևյալ ծառայություններ՝ էլեկտրաէներգիայի, ջրի, շարժական և ոչ շարժական հեռախոսների, գազի կոմունալ վարձավճարների ընդունում, բանկոմատների միջոցով կոմունալ վարձավճարների ընդունում, ճանապարհային չեկերի տրամադրում և սպասարկում, պետական կարճաժամկետ պարտատոմսերի առք ու վաճառք, արժույթային ռիսկերից ապահովում, վարկային մամակի բացում, հաստատում, կատարում ու ավիզավորում արտարժույթով, ակրեդիտիվի ձևակերպում, երաշխիքային պարտավորում ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մի շարք ծառայություններ (լիզինգ, ֆակտորինգ), որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մի շարք ծառայություններ (լիզինգ, ֆակտորինգ), որոնց արդյունավետությունը ակնհայտ է, բավականին ցածր կիրառություն ունեն հանրապետությունում: Դրանց ներդրման խնդիրը ժամանակակից տնտեսության պայմաններում հրատապ է:

Այսպիսով՝ այսօր ՀՀ բանկերը առաջարկում են միջազգային ստանդարտներին համապատասխան բարձրակարգ և առանձնահատուկ ծառայությունների մատուցում, ընդ որում բանկերը ձգտում են հաճախորդներին առաջարկել այնպիսի ծառայություններ, որոնց մախադեպը թեև կարող է արդեն իսկ գոյություն ունենալ շուկայում, սակայն նաև որոշակի նորարարություն է պարունակում: Միաժամանակ արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մի շարք ծառայություններ (լիզինգ, ֆակտորինգ), որոնց արդյունավետությունը ակնհայտ է, բավականին ցածր կիրառություն ունեն հանրապետությունում: Դրանց ներդրման խնդիրը ժամանակակից տնտեսության պայմաններում հրատապ է:

ԱՆԵՔՍԱՆՈՐ ԱՄԻՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ազատ շուկայական հաղորդակցությունների ձևավորման և զարգացման պայմաններում զգալիորեն բարձրացում է արդյունավետ դրամավարկային քաղաքականության վարման, հետևաբար բանկային համակարգի և բանկերի գործունեության կատարելագործման ուղիները և դերը: Այդ առումով կարևոր է ուսումնասիրել բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը, դրանց կազմակերպական ձևերը:

Տնտեսագիտության մեջ ընդունված է, որ «բանկային գործունեությունը բիզնեսի կազմակերպման ձևերից է»: Հետևաբար, զարգացած շուկայական տնտեսական գրականության մեջ բերված հետևյալ միտքը, որ «Ֆիրման բիզնեսի իրավաբանական կազմակերպման ինքնուրույն ձև է, հաստատված կարգով գրանցված ձեռնարկատիրական միավոր, որն ունի առևտրային ինքնուրույնություն, ընդ որում դրանք բազմազան են»¹, վերաբերում է նաև բանկային գործունեությանը: Յու.Ա.Լվովը գտնում է, որ «ըստ տնտեսական կարգավիճակի բանկերը բաժնետիրական տիպի մասնավոր կորպորացիաներ են, որոնց հիմնական նպատակը շահույթի ստացումն է»:

Բանկերի եկամտի աղբյուրներն են բանկային ծառայությունների դիմաց հաճախորդների վճարներն և «աշխատող» ակտիվներից՝ փոխառությունների, վարկ, արժեթղթեր, ստացվող տոկոսները. նրանք փոխառությունների և վարկերի տրամադրման, ինչպես նաև արժեթղթերի ձեռք բերման համար իրենց անունից ներգրավում են ֆինանսական միջոցներ²: Նույն կարծիքը ունեն նաև Յու.Վ.Պաշկուսը և Օ.Ն.Միսկին. «...բանկը բիզնեսի հատուկ կազմակերպական միավոր է, որի գործունեության սեկտորը փոխառական կապիտալով օպերացիաներն են: Բանկերը ունեն հաճախորդներ՝ փոխատուներ և վարկառուներ, և թղթակիցներ՝ այլ բանկերը և ֆինանսական վարկային ինստիտուտները, որոնց հետ բանկը մշտապես գտնվում է գործընկերային հաղորդակցությունների մեջ և, որոնք հիմնվում են մատուցվող ծառայությունների փոխկապվածության վրա»³:

Այս մոտեցումը ավելի հստակ ներկայացնում է Պ.Կուլագինը. «...շուկայական տնտեսությունում բանկը, ըստ էության, նույն ձեռնարկությունն է կամ ձեռնարկատիրական միավորը, միայն հատուկ՝ տնտեսական գործունեության դրամավարկային ոլորտում: Ազատ առք ու վաճառքի սկզբունքի հիման վրա նրանք ներգրավում

¹ Цыцерева А.Ю. Современные фирмы в развитой рыночной экономике: виды, формы, основные показатели деятельности // Вестник СПб. Серия «Экономика». 1992 № 19. С. 272.

² Львов А.Ю. Основы экономики и организации бизнеса. СПб., 1992. С. 35.

³ Пашкус Ю.В., Мисько О.Н. Введение в бизнес: Практическое пособие для предпринимателей. Л., 1991. С. 64.